

Ա. Խ. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ԻՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ
ՅԵՎ ՃԻՇՏ ԿԱՏԱՐՎԱԾ ՑԱՆՔԱԾ

ԱՊԱՀՈՎԱԿԻ Ե ԼԱՎ ԲԵՐՔԸ

ИНОТ

ИНСТИТУТ

ВОСТОКОВЕДЕНИЯ

Академия Наук Южной Азии.

СССР

1

9

3

1

ՄՈՍԿՎԱ ԽՈԶՈ ԺՈՂՈՎՐԴ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ. ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

631.5
L-24

Института
Востоковедения
Академии Наук
СССР

и. в. Պանդիրեսկով

30 JUL 2010

ԻՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՅԵՎ ՃԻՇՏ ԿԱՏԱՐՎԱԾ ՑԱՆՔՍՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Ե ԼԱՎ ԲԵՐՔԸ

ԱՇԽԱՆԱՑԱՆ ՀԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ

Հյուսիսային կովկասյան յերկրամասում աշխանացան հացահատիկները կարևորագույն կուլտուրաներ են հանդիսանում։ Առանձնահատուկ նշանակություն ունի աշխանացան ցորենը, վորը հիմնականում ցանքում ե յերկրամասի հարավային, ամենից խոնավ, տափաստանային ու նախալեռնային ռայոններում։ Այսուղի հիմա աշխանացան ցորենը գլխավոր հացաբույսն ե և բոնում ե ամբողջ ցանքսային տարածության կեսը։

Հետեւալ հնդամյակում աշխանացան ցորենն այդ ռայոններում կլինի միակ ապրանքային հատիկավոր կուլտուրան։ Պետք ե ասել, վար խորհրդայային պետությունը հենց այդ ռայոններում ուժեղ չափով զարգացնում ե նոր և տեխնիկական կուլտուրանները—գենագերչակը, սոյան, արախիսը, կհնաֆը, բրինձը։ Այս նույն ռայոններում պետք ե ծավալվեն այդիների և բանջարեղեն կուլտուրանների հակայական տարածու-


3 APR 2013

— 2 —

թյունները, Բայց և այնպես, աշնանացան ցորենն այստեղ կմնա իր գլխավոր կուլտուրաներից մեկը։ Աշնանացան ցորեննին կվերապահի ցանքսային տարածության 30-ից մինչև 45 տոկոսը։ Հարավային, խոնավոյոններում աշնանացան ցորեննին այդքան զգալի տեղ է հատկացվում այն պատճառով, վոր Հյուսիսային Կովկասն ապագայում ևս պիտի պահպանի իր, իբր հացահատիկային ռայոնի, նշանակությունը։

Հյուսիսային Կովկասի հացահատիկային կուլտուրաները մեծ նշանակություն ունեն վոչ միայն մեր արդյունաբերական խոշոր կենտրոնների մատակարարման, այլ և արտածման (եքսպորտի) համար։ Հյուսիսային Կովկասյան յերկրամասի աշնանացան ցորենների առանձնահատուկ կարևորությունը դժվար չե հասկանալ։ Յերկրամասի հարավային, հիմնական ռայոններում աշնանացան ցորենի բարձր, մշտական բներքն ապահովում ե մեզ այն տարիններում, յերբ ԽՍՀՄ յերաշտու մարզերում ստացվում ե ցածր բերք։ Յերկրամասում աշնանացան ցորենների վաղ հասունացումը թույլ ե տալիս ԽՍՀՄ-ան՝ ուրիշ յերկրներից ավելի շուտ կատարել հացի արտածումը դեպի արտասահման։ Այս հանգամանքն արտածման տեսակետից բացառիկ շահավետ պայմաններ ե ստեղծում մեր յերկրամասի այն ռայոնների համար, ուր աշնանացան ցորենն ե աճում։

Այսպիսով, հացահատիկային տնտեսության ընդլայնման խնդրի հիմնականում լուծվելը դեռևս չի նշանակում, վոր Հ. Կովկասյան յերկրամասում պիտի վերացվեն կարեորագումն հացահատիկային կուլտուրաները, — մանակագումն ու հայտնիսի արժեքավոր



Ա. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ա. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

56026-66

— 3 —

կուլտուրա, ինչպիսին ե աշնանացան ցորենը։ Հացահատիկային կուլտուրաները, մասնավորապես աշնանացան ցորենը, պետք ե մեծ դեր խաղան, վորպես ապրանքային հաց՝ հարավային, աշնանացան ցորենի ռայոններում։

Սակայն, այդ ռայոնների հետ մեկտեղ, հացահատիկային արտադրությամբ պիտի զբաղվեն նաև բոլոր հյուսիսային ռայոններն, այն տարբերությամբ միայն, վոր հյուսիսային ռայոններում ցանքսային տարածության մեծ մասը պիտի հատկացվի գարնանացան ցորենին, իսկ աշնանացան ցորենն ու հաճարը, գարնանացան ցորենից հետո, այստեղ պետք ե յերկրորդական տեղ բռնեն։

Յերկրամասի հյուսիսային կեսում մինչ վերջերս աշնանացան ցորենը լայն չափով չի տարածվել։ Այստեղ գերակշռում ե աշնանացան հաճարը։ Սա բայցառըվում ե նրանով, վոր աշնանացան ցորենն ավելի քիչ ե դիմանում ձմռանը, քան թե հաճարը։ Աշնանացան ցորենն ավելի հաճախ ե վնասվում խիստ ձմեռներից։ Այնուամենայնիվ, վերջին տարիններում նկատվում ե աշնանացան ցորենի տարածումը դեպի հյուսիս։ Աշնանացան ցորենն սկսում ե բռնել աշնանացան հաճարի տեղը։ Առաջ են յեկել աշնանացան ցորենների նոր տեսակներ, վորոնք բավականաչափ դիմանում են ձմեռվանը՝ նաև հյուսիսային ռայոններում։ Այս պատճառով ամեն տարի աշնանացանի պլանն ավելի ու ավելի յե ընդգրկում աշնանացան ցորենի տարածություններն — ինչշիվ աշնանացան հաճարի։ Աշնանացան ցորենի ցանքսերի այդպիսի պլանային ընդլայնումը ձեռնտու յե նրա համար, վոր նա ա-

փելի արժեքավոր հացաբույս ե, քան հաճարը: Սակայն վտանգավոր կիմներ մի անդամից և ամբողջովին դադարեցնել հաճարի ցանքսերը: Հաճարի փոխարինումը ցորենովպես ե ընթանա ձմեռվան դիմացող ցորենների աճեցման ու բազմացման հետ միասին:

Աշնանացան հաճարը ցորենով փոխարինելու գործում ամեն տեսակ շտապողականությունը ներկայումս կարող ե առաջ բերել խոշոր կորուստներ, վորովինետև մինչև հիմա չկան աշնանացան ցորենի այնպիսի տեսակներ, վորոնք ձմեռվան դիմանալու տեսակետից կարողանան մրցել հաճարի հետ: Բացի գրանից, հյուսիսային ռայոններում (Վեշենսկի, Վերին—Դոնի, Կաշարսկի, Որլիվսկի և այլն) կան առաջոր և ավագա—կավախառն (ըսպեսշանական) հողերի զգալի տարածություններ, վորտեղ աշնանացան հաճարն առայժմ հանդիսանում ե միակ հնարավոր աշնանացան կուտուրան:

Ահա թե ինչու, վճռականորեն աշխատելով աշնանացան ցորենների բարելավման համար, հարմարեցնելով սրանց հյուսիսային ռայոններում ձմեռելու խիստ պայմաններին, ընդարձակելով աշնանացան ցորենների՝ ձմեռվան դիմացող տեսակների ցանքու, — չի կարելի յերկրամասի հյուսիսային ռայոնների կոլլագների ու սովխոզների խոշոր մասի ցանքսաշրջաններից դուրս շպրտել աշնանացան հաճարը:

Հյուսիսային ռայոններում, իւ հաշիվ հաճարի ավելացնելով աշնանացան ցորենի ցանքսերը, անհրաժեշտ ե վճռականապես ձգտել ամբողջ աշնանացանի ընդարձակման: Բանը նրանումն ե, վոր այս-

տեղ աշնանացան հացահատիկները մի շաբք կարևորագույն առավելություններ ունեն՝ համեմատած գարնանացան հացահատիկների հետ: Ահա թե ինչու յերկրորդ հնգամյակում ցանքսերի ընդարձակման պըլանը նախատեսնում ե աշնանացան հացահատիկների ցանքսերի ընդլայնումը հյուսիսային ռայոններում և գարնանացան ցորենի ամբողջական տեղահանումը հարավային, աշնանացանի ցորենի ռայոններից:

ԱՇՆԱՆԱՑԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՐՍԱՆԱՑԱՆԻ ՀԱՆԴԵՊ

Կլիմայի և բոլոր աշխատանքները կազմակերպելու տեսակետից աշնանը և ամառվա վերջում կատարվող ցանքը մեծ առավելություններ ունի գարնանացանի հանդեպ:

Սովորաբար աշնանը ցանքող հացահատիկները վոչ միայն ծիլ են տալիս, այլ և զգալի չափով զարգանում են:

Եթե ցանքսը կատարվել ե իր ժամանակին, աշնանացան հացարույսերը ձմռանը դիմավորում են լավ ճյուղավորված (раскустившимся): Աշնանացան հանցարույսերի զարգացման այս առաջին շրջանը կարերագույնն ե նրանց կյանքում: Մեր յերկրամասի պայմաններում աշնանային յեղանակը սովորաբար նպաստում ե աշնանացան հացարույսերի ծիլերի զարգացման: Նույնիսկ աշնանացան նվազ անձրևներն ավելի մեծ ոգուտ են տալիս աշնանացան ծիլերին,

քան գարնան անձրեները — գարնանացանի ծիլերին Աշնանը գողովացումն ավելի թույլ ե, քան թե գարնանը: Սա ավելացնում ե աշնանային անձրեների ուժտավետությունը:

Աշնանից ավարտելով ճյուղավորումը, աշնանացան հացաբույսերը գարնանը մի անդամից աճել են սկսում և սովորաբար իրենց զարգացմամբ անցնում են: Գարնանային հացաբույսերից: Գարնանը, աշնանացանի ուժեղ ծիլերն արագ զարդանալով, աղատվում են մոլախոտերից: Վերջինները չեն կարողանում աճել շատ թե քիչ զգալի չափով, ուստի աշնանացան արտերն ավելի մաքուր են լինում: Քան զարնանացան արտերը: Բայց բանը միայն դրանում չէ: Պետք ե ինկատի ունենալ, վոր այն ժամանակ, յերբ արվում ե գարնանացանը, աշնանացանն արդեն բռնում ե, ոդտածործելով հողի գարնանային խոնավությունը:

Հենց այս հանգամանքն ել ուժեղացնում ե աշնանացանի ու գարնանացանի միջև յեղած տարբերությունը: Ամենավաղ գարնանից սկսելով իրենց աճումը խոնավության տեսակետից լավագույն պայմաններում, աշնանացան հացաբույսերն իրենց զարգացմամբ զգալի չափով անցնում են գարնանացանն հացաբույսերից: Նրանք ավելի շուտ են հասկ բռնում, ծաղկում ու հասունանում: Մեր չորային ույոնների պայմաններում վաղ հասունացումն աշնանացանն հացաբույսերի ամենակարեվոր հատկությունն ե, վորովհետեւ նա թույլ ե տալիս զերծ մնալ չոր քամիների կորստաբեր ազդեցությունից, վորոնք չորացնում են գարնանացան հացաբույսերը: Վերջիններա-

հենց այն պատճառով են վնասվում չորանալուց, վորաշնանացան հացաբույսերից ավելի ուշ են հասունանում:

Հազվագյուտ չեն այն տարիները, յերբ խոնավ ձմեռվանից հետո լինում ե յերաշտոտ գարուն, թեթև և վոչ հաճախակի անձրեներով: Այսպիսի տարիներում գարնանացանը սովորաբար տալիս ե ցածր բեռք, վորովհետեւ նրա զարգացումը համարյա ամբողջովին կախված ե գարնանային անձրեների չափությունից: Միենուուն ժամանակ այդ տարիներում աշնանացանը վատ բերք չի տալիս: Աշնանացան հացաբույսերի առավելությունն առանձնապես լավ նկատելի յե հենց այդպիսի տարիներում, յերբ յերաշտոտ գարուն ե լինում: Սակայն այս դեռ բոլորը չե: Աշնանացան հացաբույսերը ժամանակակից պայմաններում առանձնապես կարեոր են, վորովհետեւ նրանք թույլ են տալիս սովորողներին ու կոլխոզներին՝ ավելի ճիշտ կազմակերպել ամբողջ աշխատանքը:

Աւելանացանը բռնը ե տալիս նպատակահարմար սգագործել տրակտորները, լծկանը յեվ բանվորական ուղմը:

Աշնանացան հացաբույսերը, ցանվելով դեռ աշնանից, կրծատում են գարնանացանի ժամկետերը, վորոնք կարելուրավույն նեանակրություն ունեն գարնանացանի բերքի բարձրացման համար: Սա մի առանձնահատուկ առավելություն ունի հյուսիսային ույոններում, վորտեղ ցանվում են գարնանային վաղամշակ հացաբույսերը:

1930 և 1931 թվականի վորոնք ցույց ե տալիս, թե վորքան կարեոր ե իր ժամանակին ցա-

նել գարնանացան հացաբույսերը: Բայց, վորպեսովի վերջիններս վաղ ցանել, հարկավոր ե ցանքային տարածության մի զգալի մասը ցանել աշնանից, աշնանային հացաբույսերով:

Այսպիսով հարավային, աշնանացորենի, լավագույն ռայըններում, ինչպես և հյուսիսային ռայըններում, աշնանացանի ընդարձակման անհրաժեշտությունն անվիճելի յեւ:

ԱՇՆԱՆԱՑԱՆ ՀԱՑԱԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ամբողջ յերկրամասում աշնանացան հացաբույսերը սովորաբար ավելի բերքատու յեն, քաղաքնանացան հացաբույսերը: Բայց այնուամենայնիվ նրանց բերքատվությունը ցածր է: Ամենախոնավ ռայըններում անգամ աշնանացորենն առայժմ տալիս ե 1 հեկտարից միան 10—11 ցենտներ, մինույն ժամանակ փորձնական կայաններում, որինակելի սովորական ու կոլխոզներում ստացվում ե համարյա յերկու անգամ ավելի բերք: Ցածր բերքը հանդուրժելի կարող եր լինել մինչև համատարած կոլեկտիվացումն յեղած տարիներում, յերբ դաշտերը գտնվում եյին մանր անհատական տնտեսության ձեռքում, — զարն անընդունակ ե գործադրելու բերքատվության բարձրացման բոլոր կանոնները, — յերբ ամեն մի թիզ հողն ուներ «իր աերը», մի յերկու խրզճուկ լուծ անասունով, յերբ այդպիսի տնտեսությունների մեծամասնությունը, քայլ ու քրանքի մեջ

կորած աշխատելով, այնուամենայնիվ չեր կարողանում պլսավոր աշխատանքները կատարել իր ժամանակին:

Հիմա, յերբ հիմնականում ավարտված ե համատարած կոլեկտիվացումը, յերբ ծավալված են սովորական ներքերը, յերբ դաշտերի մի զգալի մասը մշակվում ե ՄՏԿ (մեքենա—տրակտորային կայանների), տրակտորների շարքերով, յերբ վոչչազգված են արտերի միջև յեղած տարածությունները (ոչյա), — այդպիսի բերքատվությունը սոցիալիստական դաշտերում անթույլատրելի յեւ: Այդ դրությանը պետք է վերջ տալ: Բոլոր կոլխոզնիկները պետք ե ատելությամբ լցվեն: Պեսպի բերքի կորստները և զինվելով աշնանացան հացաբույսերի մշակման աեխնիկայի գիտությամբ, կոիկ մղեն բարձր բերքի համար:

Սրգյով այդ կարելի՞ յեւ: Այս, անպայման կարելի յեւ: Աշնանացանի բերքը կարելի յեւ ավելացնել: Այդ ավելացումը կարող ե լինել կրկնակի չափով: Այս բանը տեսնում են 1930 և 1931 թվականին իրենք, կոլխոզնիկները, յերբ հավաքում են կոլխոզային համատարած դաշտերի հացը:

Միթե ամեն մի կոլխոզնիկի համար պարզ չե, թե ինչու մինչև հիմա բերքը պածը ե կոլխոզներում:

Միթե ամեն մի կոլխոզնիկի չի տեսնում մինույն կոլխոզում աշնանացան դաշտերի միջև յեղած զգալի տարբերությունը:

Այս տարի (1931 թ. — թարգմ.) կոլխոզներում կան շատ լավ մշակված և որինակելի դաշտեր: Այս դաշտերը — խոշոր, կոլեկտիվ տնտեսության պարձանքը, — իրենց տեսքով վկայում են այն հսկա-

«անհատական» բերքը դեռևս տեղ ունի կոլխոզային դաշտում:

Յեթե կոլխոզները կարողանային բոլոր դաշտերը ցանել այնպես, ինչպես ցանել են լավագույն կոլխոզային դաշտերում, ապա հենց միայն դրանով կարելի կիներ կրկնապատկել բերքը. Սակայն, փորպեսզի ապահովել բոլոր կոլխոզային դաշտերի միտահսակ լավ դրությունը, պետք է գործադրել բոլոր գյուղատնտեսական գիտելիքները՝ աշնանացանի մշակման տեխնիկայի մասին և, վոր գլխավորն ե, կոլխոզում կազմակերպել նախացանքսային ու ցանքսային աշխատանքները, աշնանացան հացաբույսերի, քաղհանակոր (պրօպահեա) ու ցելավոր (պարօօ) դաշտերի ցանքերը կատարելով հերթականությամբ:

ՎՈՐՏԵՂ ՑԱՆԵԼ ԱՇԽԱՆԱՑԱՆ ՀԱՑԱԲՈՒՅ- ՄԵՐԸ

Աշնանացան հացաբույսերից առաջ, միենույն դաշտում ցանքած կուլտուրաներն ուժեղ ագրեցություն են թողնում այդ հացաբույսերի վրա. Սա ապացուցել են փորձնական կայանները. Սա լավ նկատելի յե մեր սովորողների ու կոլխոզների որինակից. Ամեն մի ուշադիր կոլխոզնիկ տեմում ե, վոր ամենից լավ են այն աշնանացանքսերը, վորոնք կատարվում են քաղհանակոր կուլտուրաներից հետո, մաքուր ցելերում:

Ահա թե ինչ են ասում Հ. Կ. յերկրամասի փորձնական կայանների բազմամյա աշխատանքները.

յական առավելությունների մասին, վորոնք ունի խոշոր կրկետիվը:

Կարելի յե վստահ կերպով ասել, վոր Հյուսիսային կովկասը, սկսած ամենաառաջին հողագործների որերից, դեռ չի տեսել այդպիսի ցանքեր: Որինակելի մշակությամբ այդպիսի խոշոր հողամասեր յեղել են համարյա ամեն մի կոլխոզում: Այդ հողամասերը յերկու անգամ ավելի բերք կտան, քանթե ստացվել ե մինչև հիմա:

Բայց գժերախտաբար այդպիսի դաշտերը համատարած չեն: Նրանց կողքին կան դաշտեր, վորոնք հիշեցնում են անհատականների դաշտերը: Տարբերությունը միայն նրանումն ե, վոր չկա խայտաբղետություն և արտերի միջև սահմաններ: Ուշացած, իրենց աճմամբ յետամնաց աշնանացան հացաբույսերը, մոլախոտերով աղտեղված, խոստանում են միայն միջակ, իսկ տեղահան ել բոլորովին վատ բերք:

Ինչո՞վ բացատրել այդ անթույլատրելի խայտաբղետությունն ու տարբերությունը: Չե՞ վոր թե մեկ և թե մյուս ցանքսերը կատարված են կոլխոզում, կոլխոզների ձեռքով, կոլխոզային ինվենտարով ու սերմացույով:

Ամեն մի կոլխոզնիկը վորը մասնակից և դաշտային աշխատանքներին, գիտե, թե ինչով ե բացատրը աշնանացան դաշտերի դրության տարբերությունը: Կոլխոզային նույն ցանիչները, նույն տըրակտորներն աշխատելեն դաշտում վոչ իր ժամանակին, այլ ավելի ուշ, քան թե պահանջում ե աշնանացանը. ահա թե վորտեղ և ծիլերի ուշ աճման, մոլախոտերի գոյության պատճառը: Ահա թե ինչու

**Աշխանացան ցորենի 1 հեկտարի բերքատվության աղյուսակը
(ցենսներներով)**

	Աղյուսակ լիտրայոնի մ.	Դոնեցկի փորձակայան	Յերևանի փորձակայան
Վազ, մաքուր ցել	15 ^{1/4}	16 ^{3/4}	15 ^{1/4}
Ռոշաբած	»	—	11 ^{1/2}
Շաբապին	»	—	11 ^{1/2}
Քաղանակոր	»	8 ^{1/2}	10 ^{1/2}
Առանց ցելի	7	5 ^{3/4}	10

Աշխանացան հացաբույսերի համար մաքուր ցելերը լավագույն նախորդներ են հանդիսանում: Բուլը փորձնական կայաններում աշխանացան ցորենի ու հաճարի բերքատվությունը, վոր ստացվել է մաքուր ցելերից, ավելի բարձր ե, քան զբաղված ցելերից ու խոզանից (սերի) ստացվող բերքը: Սակայն մաքուր ցելերից ստացված՝ աշխանացորդների միայն լավ բերքատվությունը չի կարող մաքուր տեսակի ցելեր ունենալու անհրաժեշտության ցուցանիշ լինել: Բանը նրանումն ե, վոր մաքուր ցելերը, մի տարվա ընթացքում նկատելի կերպով բարձրացնելով աշխանացանի բերքը, առաջ են բերում ցելավոր տարածության «պրոցուլ» (պրօցլ): Յեթե հաշվենք աշխանացորենի ու նախորդ ցանքերի բերքի արժեքները, դուրս կդա, վոր մաքուր ցելերը քիչ են ձեռնուու՝ ամբողջ խոնավ գոտում և կիսաչորային ռայոններում:

Դուրս ե գալիս, վոր գաշտերի բերքատվությունը բարձր ե լինում այն դեպքում, յեթե աշ-

նանացանը հերթափոխվում է քաղհանավոր կուլտուրաների դաշտերի հետ: Դա լավ է յերեսում հետեւյալ աղյուսակից:

1 հեկտարից ստացված աշխանացան ցորենի ու նրա նախորդի բերքի ընդհանուր արտադրանի արժեքը 2 տարում (ռուբլիներով)

Աշխանացանը նախորդները	Դոնեցկի փորձնական մեջքային մակարդակությանը համապնդություն	Ջելերի մակարդակությանը համապնդություն	Ցելի մակարդակությանը համապնդություն				
Վազ, մաքուր ցել	156	131	143	224	—	—	188
Հունիսյան ցել, կերի կուլտուր գլազով	108	—	—	232	—	—	—
Դուդմա (Եկազ)	249	193	—	552	—	—	—
Ցեղիպատացորդն աստիղի համար	238	—	291	430	282	310	264
Շաբապացել յիգիպատացորդն համար	199	—	—	—	—	—	—
Սրեսմաղիկ	206	—	251	400	221	260	247
Շաբապացել արևածաղկից համար	186	—	—	—	—	—	—
Վիկա, վարսակի	147	—	161	334	249	239	200
Սորդո, հատիկի համ.	—	157	241	278	—	—	—

Ինչպես յերեսում է աղյուսակից, աշխանացանը ու նախորդ ցանքսի արտադրանքի արժեքը բարձր է համարյա բոլոր այն դեպքերում, յերբ աշխանացանը լինում է զբաղված ցելերի վրա: Միայն Դոնիցի փորձակայանում, վորտեղ վիկա—վարսակի բերքը ցածըր ե, վիկա—վարսակի ցելն իր մթերատվությամբ զիջում է մաքուր ցելին: Խոկ ընդհանրապես

մթերատվությունը բարձր ե այնտեղ, վորտեղ նաև
խորդը (գուղմա, յեզիպտացորեն) ավելի շատ ար-
տադրանք ե տալիս:

Կարելի յե ասել, վոր մաքուր ցելերը ձեռնտու
չեն հետևյալ տեղերում. — Կուրանի, Արմավիրի, Դո-
նի Նախկին շրջանների բոլոր ռայոններում, Շախտի,
Դոնեցի արևմտյան ռայոններում, Թերեքի ու Ստավ-
րոպոլի նախկին շրջ. ռայոններում. Միայն այն դեպ-
քերում, յերբ աշնանացանը կատարվում ե մոլախո-
տերով սաստիկ աղտեղված հողերի վրա, նաև այդ
ռայոններում պետք ե ոգտագործել մաքուր ցելերը,
վորպես ամենաուժեղ միջոց՝ մոլախոտերի դեմ պայ-
քարելու համար: Դոնեցի ու Շախտի նախկին շրջաննե-
րի արևմտյան ռայոններում միայն արևածաղկի,
շարքային ցելերն են ապահովում իր ժամանակին
ցանքալ, քանի վոր ուշանում ե մի այնպիսի քաղ-
հանափոր բույսի բերքահավաքը, ինչպիսին ե յեզիպ-
տացորենը. Այս պատճառով այդ հյուսիսային ռայոն-
ներում պետք ե լայն չափով ոգտագործել հենց շար-
քային (ԿԱՊԻՉԵՆՅԱՅ), խերսոնյան ցելերը: Այնտեղ,
մոլախոտերով աղտեղված հողերի վրա, լայնորեն
պիտի ոգտագործվեն մաքուր ցելերը:

Շարքային ցելեր են կոչվում այն ցելերը, վո-
րոնք գարնանից բռնվում են քաղհանափոր բույսերի
— ՀԵՂԴՐԱԳՈՐԵՆԻ, արևածաղկի, սորգոյի նոսր շար-
քերով: Քաղհանափոր բույսերի շարքերը դասավոր-
վում են այնպես, վորպեսզի չխանգարվի շարքերի
միջև ձիյու և տրակտորային ինվենտարի աշխա-
տանքը:

Բայց դա դեռ քիչ ե: Այդ շարքերը, աշնանա-

ցանը կատարելիս, չպիտի խանգարեն ցանիչների
անցնելուն:

Վորովինեաւ տրակտորային ցանիչ կցորդները
լայն տարածություն են վերցնում, անհրաժեշտ
տրակտորով ցանվելիք դաշտերի վերը հիշված շար-
քերում ցանել նաև մի քանի շարք քաղհանափոր
բույս:

Լայն հողամասերում, վորոնք ցանկում են ալ-
բակտորներով, քաղհանափոր բույսի թեկուզ մի քանի
շարքերը կկարողանան թուլացնել քամիների ազգե-
ցությունը և պահել ձյունը: Այն կոլխոզներում,
վորտեղ դեռ լայն չափով գործադրվում են ձիյու-
ցանիչները, շարքերը կարելի լե անել մեկական
կամ յերկուական:

Ցերկարամասի արևելյան կեսի չորային ռայոն-
ներում մաքուր ցելերը պիտի ծառայեն վոչ միայն
իբր մոլախոտերի դեմ պայքարելու միջոց, այլ և
հիմնական հնարավորություն՝ յերաշտի և բույսերի
մրսելու դեմ պայքարելու համար:

Պետք ե ասել, վոր չորային ռայոնների պայ-
մաններում իր ժամանակին կատարված ցանքն ա-
վելի մեծ նշանակություն ունի, քան թե մեծ խո-
նագություն ունեցող ռայոններում: Իսկ աշնանային
անձրևների ուշանալու դեպքում իր ժամանակին
ցանքը չորային ռայոններում կարելի յե կատարել
միայն այն դեպքերում, յերբ հողը ծծել ե ամառա-
յին անձրևների բավականաչափ խոնավություն: Իսկ
խոնավությունը բավականաչափ քանակով հավաք-
վում ե միայն ցելավոր դաշտերում: Սակայն,
պետք ե ի նկատի ունենալ, վոր այդ չորային ռա-

յաներում, բացի յերաշտից, աշնանացանին մեծ վը-
նասներ են հասցնում արևելյան փոթորիկներն ու
ցրերը, ձյունի ծածկոցը ցրվելու հետևանքով:

Ահա թե ինչու, վորպեսով կանխել սառը քա-
միների վնասը, ձյան ցրվելը, հարկավոր ե յերաշ-
տու ռայոններում մաքուր ցելերի հետ նաև լայն
չափով ոգտագործել խերսոնյան և շարքային ցելերը:

Չորային ռայոններում դա անհրաժեշտ ե թե
յերաշտի դեմ պայքարելու և թե աշնանացանը սա-
ւը քամիների ազդեցությունից, մըսելուց պաշտ-
պանելու համար: Շարքային ցելերն առանձնապես
կարևոր են հարավային, առաջավաճյուն ռայոններում,
վորտեղ արևելյան ուժեղ քամիներն առանձնապես
հաճախ են ներգործում ցանքերի վրա և բոլորովին
քշում—տանում են ձյան ծածկոցը: Սա առանձնա-
պես կարևոր է այն պատճառով, վոր հենց հարա-
վային ռայոններում ցանքում են աշնանացորեններ,
վորոնք ավելի զգայուն են ձմեռվա յեղանակների
հանդեպ, քան հաճարը:

Այսպիսով, բավականաչափ մթնոլորտային տե-
ղումներ ունեցող բոլոր ռայոններում (Կուբանի,
Արիավիրի, Մայկովի Նախկին շրջաններ, Թերեքի ու
Ստավրոպոլի Նախկի. շրջանների արեմտյան մաս, Դու-
նի Նախկին շրջանի մեծ մասը (արևմտյան), Գի-
գանտի ռայոնի խոշոր մասը) աշնանացան հացարույ-
սերի ամենալավ տեղը քաղհանավոր կուլտուրաներից
հետո ցանքող դաշտն ե: Չորային ռայոններում շար-
քային ու մաքուր ցելերն ամենալավ տեղն են աշ-
նանացանի համար: Խոնավ ռայոններում հերկվող ա-
րոտավայրերն ու ցանքած արածատեղերը նույնապես

հարմար են աշնանացան ցորեններին: Մոլախոտե-
րով սաստիկ աղտեղված դաշտերում նրանց (մոլա-
խոտերի) դեմ կավելու ամենալավ միջոցը յերկրամա-
սի բոլոր տեղերում հանդիսանում են մաքուր ցելերը:


Պետք է ասել, վոր յերկրամասի ռայոնների մեծ
մասում 1931 թվականին քաղհանավոր կուլտուրա-
ները ցանքերի մեջ զգալի տեղ են բռնում: Սակայն
հարավում քաղհանավոր կուլտուրաների դաշտերն ու
ցելերը դարձյալ քիչ են, քան աշնանացանի յենթա-
զգարվող տարածությունը: Բայց գրանից, մի քանի
քաղհանավոր բույսերից դաշտերն այնքան ուշ են ա-
զատվում, վոր այլև հնարավոր չի լինի այնաեղ աշ-
նանացան անել: Այս պատճառով շատ կոլխոզներ ըս-
տիպված կլինեն աշնանացանը կատարել վոչ միայն
քաղհանավոր կուլտուրաների դաշտերում ու ցելերում,
այլև հերկովի արոտավայրերում ու խոզաններում
(Ռերիա):

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՀՈՂՆ ԱՇԽԱՆԱՑԱՆԻ ՀԱՄԱՐ

Ցելավոր դաշտերը ցանքում են առանց մի վորեւ
առանձին նախապատրաստության, յեթե ցելը կատար-
վել է իր ժամանակին ու լավ և յեթե դաշտն ազատ
է մոլախոտերից ու բավականաչափ փիրունացած:

Ցելերը լավ մշակված լինելու դեպքում ցանք-
ներն ուղղակի թողնվում են դաշտ: Քաղհանավոր
դաշտերն ևս մշակման կարիք չեն զգում, յեթե քաղ-
հանավոր բույսերը լավ են մշակվել:

Աշնանացանի համար քաղհանավոր դաշտերի մը-



շակումը հարկավոր ե միայն այն դեպքում, յեթե քաղհանավոր բույսերը քաղհանգել են վոչ իր ժամանակին և վատ, յեթե այդ բույսերի քաղի մոմենտին նըանց շարքամիջան տարածությունները ծածկվել են մոլախոտերով։ Այս դեպքում, աշնանացան բույսերը ցանելուց առաջ, անհրաժեշտ ե թեթևակի վարել կամ ցաքանել։ Իսկ յեթե քաղհանավոր դաշտում խոչը մոլախոտեր կան, ցանքը կարելի յե կատարել դիսկավոր ցանիչով, առանց նախապես վարելու։

Զեռնարորի ցանիչով ցանելու դեպքում, անհրաժեշտ ե ցանելուց առաջ թեթևակի վարել կամ ցաքանել քաղհանավոր բույսերի դաշտերը։

Աշնանացան բույսերի ցանքսից առաջ, հնձելուց հետո մնացած խոզանը (стериля) պետք ե վարել ինչքան կարելի յե շուտ։ Ամենից լավ ե աշնանացանին հատկացված խոզանի կրկնավազը կատարել հացարույսերը հավաքելուց հետո։

Մոտավորապես այս նույն աշխատանքները պիտի կատարել նաև հերկովի արոտավայրերում, վորտեղ աշնանացան պիտի արվի։

Այն դեպքերում, յերբ խոզանի ու հերկովի արոտավայրերի կրկնավարը կատարվում ե չոր յեղանակին, վարած դաշտը չի տափանավում։ Իսկ յեթե վարելուց հետո շուտով անձրևներ գան, հարկավոր ե հողակույտեր ունեցող մակերևույթը տափանել։ Տափանումը, փխրացնելով հողի մակերեսը, կրպահպանի խոնավությունը, վորը կարենը ե աշնանացան հացարույսերի սերմերի աճման համար։

Ենչպես յերևում ե նախացանքսային աշխատանքների այս նկարագրությունից, նրանք այնքան

ել բարդ չեն։ Այդ աշխատանքները հեշտ ե կատարել, յեթե ամեն մի սովորող և կոլխոզ մինչև աշնացանը հարկավար պատրաստություն տեսնի։ Նախացանքսային աշխատանքները հեշտ ե կատարել, յեթե սովորություն ու կոլխոզում կա աշխատանքի լավ մտածված պլան, վորը նախատեսնում է նախացանքսային կարենրագույն աշխատանքների ժամկետերն ու քարշող ուժի, աշխատող ձեռների քանակը, վորն անհրաժեշտ ե այդ աշխատանքները կատարելու համար։ Պետք ե ասել, վոր աշնանացանի նախապատրաստությունը պիտի կատարվի յեռուն ժամանակ։ Հացարույսերի բերքահավաքն ու կալոր, հացի տեղափոխությունը կալից գեպի ելեվատորներն ու մըթերակայանները—սրանք բոլորն այնպիսի աշխատանքներ են, վորոնք ժամերով են կատարվելու։ Այս աշխատանքների ընթացքում հապաղման (դանդաղ շարժվելու) ամեն մի ժամը մեծ կորուստներ ե սովանում։ Այնուամենայնիվ, աշխատանքի ու քարշող ուժի ճիշտ կազմակերպման դեպքում, այդ շտապ աշխատանքները չպիտի խանգարեն աշնանացանի նախապատրաստության։

Դատապարտելի անտնտեսավարություն են հանդիսանում 1930 թվականի աշնան բազմաթիվ որինակները, յերբ շատ կոլխոզներ աշնանացանի համար հողի նախապատրաստությունը ձգձգեցին մինչև խոր աշուն, իսկ աշնանացանը հասցըին մինչեւ սառնամանիքները։ Միայն բարենպատճենուը վրկեց բոլոր ուշացած ցանքսերը։ Սակայն ցանքսերի զգալի ուշացումից առաջացած վնասներն այնուամենայնիվ շատ մեծ են ներկա 1931 թվականին։

ԻՆՎԵՆՏԱՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՅՑՈՒՆԸ

Վորպեսզի ապահովել հողի իր ժամանակին պատրաստումն աշնանացանի համար և իր ժամանակին կատարվելիք ցանքսը, անհրաժեշտ և վաղսրոք պատրաստել ինվենտարը։ Դրա համար անհրաժեշտ է գութանները, տափանները, կուլտիվատորները, ցանիչները ։ Վերանորոգել սկսել բերքահավաքման ինվենտարի վերանորոգումը վերջանալուց անմիջապես հետո։

Վաղորոք պիտի պատրաստել նաև կցվող մեքենաները։ Վերանորոգման արհեստանոցները պիտի ժամանակին սարքեն բոլոր վնասված մեքենաները։ Մեքենաների, կցորդների անպատրաստությունն ապացույց կլինի կոլխոզների վարչությունների ու բրիդադիրների անգործունեյության ու անտնտեսավորության։

ԱՇԽԱՆԱՑԱՆ ՀԱՅԱԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Արդյոք մի շարք վայրերումհաճա՞ր ցանել, թե ցուրեն, — ներկայումս այս հարցը վորոշում ե նրանով, վոր յերկրամասի հարավային ռայոններում կատարվելու յե աշնանացան ցորենի պլանային ցանքսը։

Այստեղ ցորենն ամբողջովին բռնում ե աշնանացան հաճարի տեղու ։ Հաճարի ցանքսերն այստեղ մնում են միայն սովորություններում և կոլխոզների կենդանաբուծուկան ագարակներում (ֆերմա), վաղ արոտաեղիների վրա։

Յերկրամասի հյուսիսային կեսում, սկսած Պավլովսկու Կուշևակու, Ստարոմինսկու, Բելոգլինսկու

ուայոններից, դեպի հյուսիս, — աշնանացան ցորենը պլանային կարգով պետք ե ավելի և ավելի փոխարինումն առանձնապես վճռական կերպով պիտի տեղի ունենալուն ուայոններում, վորոնք գտնվում են աշնանացորենի ուայոնների սահմանի մոտ։ Հաճարի տեղահանումն ավելի զգուշությամբ ե կատարվելու յերկրամասի ավելի հյուսիսային և հյուսիս—արևելյան ռայոններում։ Թե հյուսիսային և թե հյուսիս—արևելյան ռայոններում կլիման այնքան խիստ ե, վոր ցորենի չհարմարեցված տեսակները ձմեռվա ընթացքում վտանգի կենթարկվեն։ Աշնանացան ցորենների ծիլերի մրսելն ու արմատահանվելն այնտեղ գեռ կարող ե մեծ ավերածություններ առաջ բերել։ Այն կոլխոզներում ու սովորություններում, վորտեղ կան ավագու և ավագա—կավախառն հողեր, վերջիններիս ոգտագործման համար հաճարն առայժմ հանդիսանում ե անվոխարինելի աշնանային կուլտուրա։ Ավագու տեղերում հաճարի փոխարեն չի կարելի ցորեն ցանել։

Կատարելով աշնանացան հացարույսերի վերաբերյալ պետության պլանային առաջադրությունը, յուրաքանչյուր սովորող և կոլխոզ պետք ե ընտրել ցորենի ամենաբերքատու և ամենալավ տեսակներ։

Աշնանացանի բերքի համար սլայքարելու գործում սերմացույի տեսակը մեծ նշանակություն ունի։

Ներկայումս յերկրամասում անց են կացված աշնանացան ցորենների գանազան տեսակների մի շարք լայն փորձեր։

Այդ փորձերի հիման վրա սահմանված են այն

տեսակները, վորոնք պիտի հիմնական լինեն զանագան ռայոնների համար:

Յերկրամասի բոլոր հյուսիսային և հյուսիս-արեւակելան ռայոններում (Կամբնսկի, Վ. Դոնյան, Միլերովսկի, Վեշենսկի, Կաշարսկի, Տարասովսկի, Սուլինսկի, Շախտի, Կանստանտինովսկի, Մորոզովսկի, Ռելիվսկի, Խոմանովսկի, Ցիմլյանսկի, Գիգանտի, Պըրոլետարական, Զիմոֆնիկովի, Բելովինսկի, Նովչերկասկի, Մեչետինսկի, և Պրեկումսկի) ամենալավ, ձըմեռվան ամենից շատ դիմացող տեսակն է ճանաչված ԳՈՍՏԻՆԱՆՈՒՄ 237 կոչված ցորենը: Աշնանացորենի այս տեսակը, վորը փորձված է Սարատովի փորձնական կայանի կողմից, հանդիսանում է ձմեռվան ամենից լավ դիմացող, ամենահարմարը՝ այդ ռայոնների ձմեռվա խմատ պայմաններում:

Հարավային, աշնանացորենի ռայոններում—նախկին Կուբանի, Մայկովի, Արմավիրի շրջաններ, —ինքնավար մարզերում, Գյորգիևսկու, Հանքային Ջրերի ու Յեսենտուկի ռայոններում (Նախկին Թերեքի շրջանի), Նախկին Դոնի շրջանի ռայոններում (բացի Նովչերկասկի ու Մեչետինսկի ռայոններից), Կրիմի, Անապայի ռայոններում հիմնական տեսակը համարվում է ՈՒԿՐԱՆԿԱՆ:

Ցորենի այս տեսակը հայտնի յե գարձել իբրև ամենաբերքատուն՝ բարենպատ ձմեռվա պայմաններում: Ուկրաինական տալիս է առաջնակարգ հատիկ վորից ստացվում է իր վորակով լավագույն ալյուր: Ուկրաինական, վորպես հիմնական տեսակ, խորհուրդ է արվում ցանել Ստավրոպոլի ռայոնում, Իզարինութիւնսկի ռայոնում, Պետրովսկու ռայոնում, Վինոնութիւնսկի ու Վինոնութիւնսկի ռայոնների համար:

Գելենսկու ռայոնի հարավային մասում, Բլագադար-նինսկու ռայ. արևմտյան մասում, Կուրսավակի ռայ. կենտրոնական ու հարավային մասում և Ալեքսանդրովսկի ռայ. արևելյան մասում: Սակայն Ստավրո-պոլի հացահատիկային սովորողը, վորը գտնվում է Ալեքսանդրովսկի և Բլագադարնոյի ռայոններում, հրա-ժարվեց ուկրաինակայից և նրան ամբողջովին փոխարի-նեց Կոռպերատորկայով:

ԿՈՈՂԵՐԱՏՈՐԿԱՆ, վորպես հիմնական տեսակ խորհուրդ է արվում ցանել Իզարինութիւնսկու կենտրոնական մասում, Վինոնութիւնսկու արևմտյան և Պետրովսկու ռայ. հյուսիս-արեւմտյան մասերում:

Գիգանտի ու Բելովինսկի ռայոնում կարելի յե ցանել Ուկրաինական ու Կոռպերատորական, վորպես լրացուցիչ տեսակներ:

Մեղվեժենսկու ռայոնում, Պետրովսկու ռայոնի հյուսիս-արևելյան մասում, Վինոնութիւնսկու ու կենտ-րոնական մասում և Թուրքմենական ռայոնի հյուսիս-արևելյան ու հարավ-արեւմտյան մասերում, վորպես հիմնական տեսակ, հանձնարարվում է ՍՏԵՊՆՅԱՋ-ԿԱՆ: Այս նույն ռայոններում լրացուցիչ տեսակն է Կոռպերատորկան:

Կոռպերատորկան, վորպես լրացուցիչ տեսակ, պիտի ցանվի ն. Ալեքսանդրովսկի, Պրիկումսկի, Վո-րոնցով-Ալեքսանդրովսկի ռայոններում, Մոգդովի ռա-յոնի արևմտյան մասում, Պրախլադնու ռայոնում ու Ուկրաինում: ԶԵՄԿԱՆ, իբրև լրացուցիչ տեսակ, հանձ-նարարվում է ցանել ն. Ալեքսանդրյան, Նեվիննոմսկի ու Արմավիրի ռայոնների հյուսիսային մասերում, Բա-

տալպաշինսկի ու Ռուբագնևսկի ռայոններում ու Զեչնիայում:

Աղիգեյում, Նախկին Կուբանի շրջանում (բացի Տեմրուկի ռայոնից) և Սևծովյան շրջանում թույլատրելի տեսակ և համարվում Սևալիյաչկա կոչված ցորենը:

Ինարկե տեսակների այս ռայոնացումը հետագա ձշտման կարիք ունի: Յուրաքանչյուր տարին ոգնում է ավելի լավ և ճիշտ վորոշել աշնանացան ցորենների սելեկցիոն տեսակները, վորոնք ամենից հարմար են այս կամ այն ռայոնին:

«Գոսսորտսեմորեստի» սովխոզների և սերմարուժական կոլխոզների սիստեմը մոտակա տարիներում աշնանացան ցորենի ցանքն ամեն տեղ կապահովի մաքուր տեսակի սեռմացուներով: Սակայն, բացի ցորենի գոյություն ունեցող տեսակները բազմացնելուց, պետք է հետազում աշխատել նոր, ավելի բերքատու և ձմեռվան ավելի դիմացող ցորեններ գտնելու համար: Աշնանացան ցորենների սելեկցիան առանձնապես կարևոր է կատարել յերկրամասի հյուսուային կեսում, վորտեղ մինչև այժմ դեռ չկա միանգամայն հուսալի տեսակ, վորը կատարելապես դիմացկուն լիներ ձմեռվա ընթացքում:

Վորպեսզի լուծել այդ ռայոններում սակավարժեք համարը աշնանացորենով փոխարինելու խնդիրը, անհրաժեշտ է ինչ կերպ ել լինի, ընտրել ցորենի միանգամայն կայուն տեսակ: Սարատովի հացահատիկային անտեսության ինստիտուտն աշխատանք է կատարում աշնանացան հաճարի և աշնանացան ցորենի խառնուրդից նոր բույսեր ստանալու համար,

վորոնք պետք է ունենան հաճարի ձմեռային դիմացկունություն և ցորենի վորակի Սակայն այդ ինստիտուտի աշխատանքը չպիտի կանգնեցնի սելեկցիոն գործը չ. կ. յերկրամասի սելեկցիոն կայաններում:

Աշնանացան հաճարի տեսակները բազմաթիվ չեն: Բոլոր հյուսիսային ռայոնների համար, վորտեղ հաճարը ցանքերի մեջ զգալի տեղ է բռնում, թույլատրելի տեսակներ համարվում են ԲԵԶԵՆՉՈՒԿԻ ԴԵՂՆԱՑԱՏ և ՊԵՏԿՈՒՍՍԿԱՅԱ կոչված տեսակները: Նախկին Սալտկի շրջանի ռայոններում հարմար տեսակ է ճանաչված ՇԼԱՆՇՏԵՆԿԱՅԱՆ և ԿՐՈՒՊՊ-ՄԱՆԻՋՔ: Տեղական աշնանացան գարելի յև ցանել կուրանի բոլոր խոնավ ռայոններում և ամբողջ յերկրամասի նախալեռնային, հողագործական դուռը:

ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՑԱՍԱՐ

Ցանքսից առաջ ընտրած տեսակի սերմացուները պետք է մշակման յինթարկվեն: Սերմացուները պետք է զտվեն, տեսակավորվեն ու ախտահանվեն:

Սովորական տեսակավորող մեքենաներն ու տրոյիկրները ծառայում են վորպես միջոց՝ սերմացուն զտելու և տեսակավորելու համար:

Այժմ սովխոզներում լայն չափով գործադրվում են տեսակավորող բարդ մեքենաներ, վորոնք աշխատում են մոտորով: Նրանց արտադրողականությունը համուռ է որական մի քանի տասնյակ տոննից: Ցեղած տեսակավորիչները և տրիյերներն ապահովում են սերմացուներից բոլոր մանր, ջարդված հատիկները, ինչ-

պես նաև բոլոր մոլախոտերի սերմերը վտարելու հնարավորությունը։ Տեսակավորումն ու գտումը թույլ են տալիս ցանքսի համար ընարել ամենալավ, ամենակենսունակ հատիկը, անտեսության համար պահել մանր ու ջարդված հատիկները (վորոնք սովորաբար կորչում են անողուտ), բաժանել մոլախոտերի սերմերը և հենց դրանով կանխել մոլախոտերի առումը դաշտերում։

Բացի զտելուց և տեսակավորելուց, աշնանացան հացարույսերի սերմացուները կարիք ունեն ախտահանման, վորը կանխում է ժանդ (գոլովնյա) հիվանդությամբ ուժեղ վարակումը։ Ախտահանումը լինում է թաց և չոր թաց ախտահանման դեպքում գործ և ածվում ֆորմալին (թունավոր հեղուկ)։ Չոր ախտահանման դեպքում, վորպես ժանդ հիվանդության սրպորաները (սաղմերը) սպանող թույն, գործ են ածվում փոշիանման թույներ, — ջրային մամնիկներ ըրպարունակող պղնձի արջասպ և ածխաթթվուտային պղինձ։

Ներկայումս լայն չափով տարածված են թաց և չոր ախտահանման մեքենաներ։

Թաց ախտահանման դեպքում սովորաբար գործադրվում է ֆորմալինը, վորի խառնուրդը պատրաստվում է այսպես, — ֆորմալինի 1 մոսը լուծվում է ջըրի 300 մասի մեջ։

Չոր ախտահանման դեպքում գործադրվում է անջուր պղնձի արջասպը, ածխաթթվուտային պղինձն ու փարիզյան կանաչը։ Սերմացույի յուրաքանչյուր ցենտրների համար վերցնում են 300 դրամ անջուր պղնձի արջասպ, կամ 300 դրամ՝ ածխաթթվուտային

պղինձ և կամ 50 դրամ փարիզյան կանաչ։ Սերմացույի վրա փոշին ցանքում է մեքենայով, կամ սերմացուն ախտահանվում է տակառում, վորտեղ հացահատիկը մանրակրկիտ կերպով խառնվում է թունավոր փոշու հետ։ Ցեվ, վորովինետե սերմացուն ախտահանելու ժամանակ գործադրվող փոշիները թունավոր են, ուստի բոլոր աշխատողները պետք է զգուշություն պահպանեն։

Խորհուրդ է տրվում այդ աշխատանքի ժամանակ դիմակներ հազնել և ճշտությամբ կատարել սերմացույի ախտահանման վերաբերյալ հրահանգի բոլոր պահանջները։

ԱՇԽԱՏԱՑԱՆԻ ԺԱՄԿԵՏԵՐԸ

Դեռ հին ժամանակներից առաջացել է աշխանացան հացարույսերի ցանքսի վերաբերյալ մի այսպիսի ռուսական առած, — ««Ե ԽՈՏԵ Յ ՅՈՒ, Ի ՊՈՐՈ» (ցանիր թեկուղ մոխրի մեջ, միայն թե ժամանակին)։ Աշխանացան հացարույսերի համար իր ժամանակին կատարվող ցանքսի կարևորությունը դժվար չե հասկանալ, յեթե հիշել, վոր ձմեռվան դիմանալու համար աշխանացան հացարույսերի ծիլերը պիտի լինեն ամուր, նրանց արմատային սիստեմը պիտի կարողանա զարգանալ մինչեւ սառնամանիքները։ Վորպեսպի ծիլերն իսկապես ճյուղավորվեն և ամբապնդվեն մինչեւ սառնամանիքները, նրանց հարկավոր ե մոտ 7 շաբաթ, սկսած ցանքսի մոմենտից։ Ահա թե ինչու խորհուրդ է տրվում, յերկրամասի ամբողջ հյուսիսային մասում, վորտեղ սառնամանիքներն ավելի

շուտ են սկսվում, աշնանացան բույսերի ցանքսը կատարել ՈԳՈՒՏՈՒՄ Վերջին Յեղ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՍԿԶԲԻՆ: Հարավային, աշնանացորենի ռայոններում աշնանացան հացաբույսերի ցանքսի ամենալավ ժամանակը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ Վերջն ՈՒ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍՆ Ե: Այստեղ, հարավում, վաղ ցանքսերը վնասվում են շվեդական և հետենյան ճանձերից:

Յեղ ընդհակառակը, նոյեմբերին կատարվող ցանքսերը չեն ապահովում ծիլերի բավականաչափ աճումը և վերջինները կարող են սաստիկ վնասվել նույնիսկ հարավի մեղմ ձմեռվա պայմաններում: Բայցի այդ, աշնանացան ցորենի ուշ ցանքսերը հարավում սովորաբար չեն կարողանում աշնանից ճուղավորվել: Գարնանը, յերբ իր ժամանակին ցանված աշնանացան բույսերը շարունակում են աճել, ուշ ցանվածները ճուղավորվում են (ԿԱՏԱՏԵ), աճումից հետ են մնում, ավելի հաճախ են յենթարկվում չոր քամիների ազդեցության և, համեմատած նորմալ ժամանակ ցանված աշնանացան հացաբույսերի հետ, սովորաբար խիստ ցածր բերք են տալիս: Կարելի յե վստահ կերպով ասել, վոր միայն կուբանի հարավային ռայոնները ցանքսերի ուշացումից կորցնում են հարյուր հագարավոր փութ հացահատիկ: Դրանում համոզվելու համար, կարիք չկա բարդ հաշիվներ անել: Աշնանային ուշացած ցանքսերի հենց միայն տեսքը, նրանց նվազ բերքատվությունը յուրաքանչյուր կոլխոզում պետք է զորահավաքե կոլխոզնիկներին հացահատիկի հակայական քանակության կորստների գեմ պայքարելու համար, վորոնք առաջ են գալիս ցանքսի ուշացումից: Սակայն յեթե հարավային ռայոններում

վերտեղ նույնիսկ աշնանացանի ուշացած և թույլ ծիլերը հաջողակ են ձմեռում, ցանքսի ժամկետերն այդպես մեծ նշանակություն ունեն բերքի համար, ապա հրաւիսային ռայոններում ցանքսի ժամկետերը հաճախ կանխորոշում են հենց բերք ստանալու հնարավորությունը: Այստեղ, ձմեռվա խիստ պայմաններում, թույլ ծիլերը հաճախ վնասվում են սառնամանիքներից, իսկ գարնանը—հողի փոփոխակի դրությունից,—մերթ հալչելուց ու մերթ սառելուց:

Հյուսիսային ռայոններում հաճախ ուշացած աշնանային ցանքսերը փշանում են: Այստեղ իր ժամանակին ցանքս անելուն լուրջ արգելվ են հանդիսանում խոզան արտերի հողի չորությունն և քաղանավոր գաշտերի ուշ բերքահավաքը, վորոնք ողտագործվում են աշնանացան հացաբույսերի ցանքսի համար:

Այն հողերը, վորտեղ աշնանացանը կատարվում է հացաբույսերը հնձելուց հետո, սովորաբար չորացած են լինում: Այսպիսի հողերի վրա ցանքս կարելի յե անել միայն անձրեկից հետո: Սակայն, աշնանային մեծ ցանքս կատարելու դեպքում յերբեմն հարկավոր ե լինում ցանել «թեկուզ մոխրի մեջ» բայց ժամանակին», այսինքն սահմանված ժամկետում, առանց անձրեներին սպասելու: Չոր յեղանակին ցանված աշնանացան բույսերի կորուստը հնարավոր է այն դեպքում, յերբ հողում յեղած խոնավությունը բավականանում է միայն սերմերի ուղացման ու ածեցման համար: Յեթե այս դեպքում հողը չխոնավանա անձրեկից, առաջ կգա աշնանացան հացաբույսերի ծիլերի փշացման վտանգ: Այն գեպքերում, յերբ ուշանում է քաղանավոր կուլտուրաների հասունացուցացումից:

չուտ են սկսվում, աշնանացան բույսերի ցանքսը կատարել ՈԳՈՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՅԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՍԿՃԲԻՆ: Հարավային, աշնանացորենի ռայոններում աշնանացան հացաբույսերի ցանքսի ամենալավ ժամանակը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՎԵՐՋՆ ՈՒ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍՆ Ե: Այստեղ, հարավում, վաղ ցանքսերը վնասվում են շվեդական և հետեւյան ճանձերից:

ՅԵՎ ԸՆԴՀԱԿԱՌԱԿՐ, ՆՈյեմբերին կատարվող ցանքսերը չեն ապահովում ծիլերի բավականաչափ աճումը և վերջինները կարող են սասաիկ վնասվել նույնիսկ հարավի մեղմ ձմեռվա պայմաններում: Բայց այդ, աշնանացան ցորենի ուշ ցանքսերը հարավում սովորաբար չեն կարողանում աշնանից ճյուղավորվել: Գարնանը, յերբ իր ժամանակին ցանված աշնանացան բույսերը շարունակում են աճել, ուշ ցանվածները ճյուղավորվում են (ԿԱՇՏԱՅԵ), աճումից հետ են մնում, ավելի հաճախ են յենթարկվում չոր քամիների ազգեցության և, համեմատած նորմալ ժամանակ ցանված աշնանացան հացաբույսերի հետ, սովորաբար խիստ ցածր բերք են տալիս: Կարելի յէ խստահ կերպով ասել, վոր միայն կուբանի հարավային ռայոնները ցանքսերի ուշացումից կորցնում են հարյուր հազարավոր փութ հացահատիկ: Դրանում համոզվելու համար, կարիք չկա բարդ հաշիվներ անել: Աշնանային ուշացած ցանքսերի հենց միայն տեսքը, նրանց նվազ բերքատվությունը յուրաքանչյուր կոլխոզում պետք է զորահավաք կոլխոզնիկներին հացահատիկի հսկայական քանակության կորաների դեմ պայքարելու համար, վորոնք առաջ են գալիս ցանքսի ուշացումից: Սակայն յեթե հարավային ռայոններում

վորտեղ նույնիսկ աշնանացանի ուշացած և թույլ ծիլերը հաջողակ են ձմեռում, ցանքսի ժամկետերն այդպես մեծ նշանակություն ունեն բերքի համար, ապա հրտասարդին ռայոններում ցանքսի ժամկետերը հաճախ կանխորոշում են հենց բերք ստանալու հնարավորությունը: Այստեղ, ձմեռվա խիստ պայմաններում, թույլ ծիլերը հաճախ վնասվում են սառնամանիքներից, իսկ գարնանը—հողի փոփոխակի դրությունից,—մերթ հալչելուց ու մերթ սառելուց:

Հյուսիսային ռայոններում հաճախ ուշացած աշնանային ցանքսերը փշանում են: Այստեղ իր ժամանակին ցանքս անելուն լուրջ արգելք են հանդիսանում խոզան արտերի հողի չորությունն և քաղհանավոր գաշտերի ուշ բերքահավաքը, վորոնք ոգտագործվում են աշնանացան հացաբույսերի ցանքսի համար:

Այն հողերը, վորտեղ աշնանացանը կատարվում է հացաբույսերը հնձելուց հետո, սովորաբար չորացած են լինում: Այսպիսի հողերի վրա ցանքս կարելի յէ անել միայն անձրկից հետո: Սակայն, աշնանային մեծ ցանքս կատարելու գեպքում յերբեմն հարկավոր ե լինում ցանել «թեկուզ մոխրի մեջ, բայց ժամանակին», այսինքն սահմանված ժամկետում, առանց անձրեներին սպասելու: Զոր յեղանակին ցանված աշնանացան բույսերի կորուստը հնարավոր է այն գեպքում, յերբ հողում յեղած խոնավությունը բավականանում է միայն սերմերի ուռածացման ու աճեցման համար: Յեթե այս գեպքում հողը չխոնավանա անձրեկից, առաջ կցա աշնանացան հացաբույսերի ծիլերի փշացման վտանգ: Այն գեպքերում, յերբ ուշացումն է քաղհանավոր կուլտուրաների հասունացու-

մը և նրանք խանգարում են իր ժամկետին ցանքսի կատարելուն, աշնանացան հացաբույսերի ցանքսերի ժամկետերն անխուսափելիորեն ձգձգվում են։ Հաճախ արևածաղիկը քաղվում է ոգոսուսին, աշնանացանից առաջ։ Յեզիպտացորենը սովորաբար ավելի ուշ ե հասնում և կարող ե աշնանացանն ուշացնել, ժամանակն հյուսիսային ույայններում, սակայն, յեզիպտացորենի շուտ հասնող տեսակները, որինակ, Այլորի—Կինդը, թույլ են տալիս դաշտն ազատել սեպտեմբերի առաջին կեսին, իսկ մի քանի տարիներում—հույնիսկ ոգոսառոսի վերջին։ Հասկանալի յեզիպտացան փոր աշնանացանն իր ժամանակին կատարելը հնարավոր կլինի միայն այն գեպքում, յերբ յեզիպտացորենի հասկերի (ուշագույն) և արևածաղիկի զամբյուրդների հավաքումից հետո անհապաղ հավաքվում են նաև նրանց ցողունները։

Շարքային ցելերում ցանքս անելու գեպքում՝ կատարվում ե նորմալ ժամկետերում, առանց սպասելու քաղհանացանի կուլտուրայի հասունացման։ Մաքուր ցելերը, չնորհիվ յերկը մակերեսույթի մըշակում այս կուլտուրայի համար պահում են վերին շերտերում և այս սպատճառով թույլ են տալիս ցանքսը կատարել նորմալ ժամկետերում։ Սակայն, ինչպես ասված ե այս գրքում, մաքուր ցելերը ձեռնըտու յե ոգտագործել միայն չոր ույայններում, միայն մոլախոտերով սաստիկ ազտեղված հողերում—յերկրամասի բոլոր ույայններում։

Յեզիպտացորենի, բամբակի բերքահավաքումն ուշանալու գեպքում սրանց դաշտերում սմիկաժեշտեցաւ և

դործադրել աշնանացան հացաբույսերի ցանքսի փորձերը, աչքի առաջ ունենալով վակի համար բույսերի վնասաման վորոշ հնարավորությունը, իհարկե, յեթե հենց փորձի սկզբում հայտնաբերվեն զգալի կորստներ, հարկավոր կլինի հրաժարվել ցանքսի այդ յեղանակից։

Պըիկումսկու փորձնական կայանը 1930 թվականին, աշնանը, ցանքսը կատարեց չքաղված բամբակի դաշտում, կազմակերպելով հենց ցանիչի անցնելուց հետո բամբակի հավաքումը։ Առաջին փորձը ցույց տվեց, վոր ցանքսի այդ յեղանակը չի առաջ բերում քաղհանացանի դաշտի մեծ կորուստ և ապահովում ե աշնանացանի բերքի ավելացումը, քանի վոր այստեղ, բացի ցանքսն իր ժամանակին կատարելուց, ստեղծվում ե քաղհանացանի կուլտուրայի ցողունները ձմեռը թողնելու հնարավորություն, իսկ նրանց շընորհիվ ձյունը յերկար կպառկի և կինշտանան ձմեռելու պարմանները։

Բամբակացան ույայններում, բամբակի դաշտերում և հյուսիսային ույայններում—յեզիպտացորենի դաշտերում աշնանացանի այդպիսի յեղանակը պետք է փորձել 1931 թվի աշնանը։ Հյուսիսային ույայններում հաճախ կիրաւում ե աշնանացանը «ձյունի տակ»։ Այս ուշացած աշնանացանքսերն ավելի քիչ են վնասվում մրսելուց։ Սակայն այս ցանքսերը անհուսալի յեն չօրային ամառ ունեցող տարիներում և հազվի են տարբերվում գարնանացանից։ Բավականաչափ մթնոլորտային տեղումներ ունեցող տարիներում այդ «ձյունի տակ» կոչված ցանքերը հազիվ են տարբերվում նորմալ ցանքսերից։

ՑԱՆՔՍԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Նայած ռայոնին և հողի հատկության, գործականում սահմանված և փորձերով ստուգված են աշխանացանին նորմաները: Հարավային, խոնավ ռայոններում, վորտեղ հողն արդավանդ ե բերքը բարձր (նախկին կուրանի, Արմավիրի, Մայկովի շրջանների բոլոր ռայոնները, ինքնավար մարզերը, Ստավրոպոլի և Թերեքի նախկին շրջանների՝ արևմտյան, խոնավ ռայոնները), անհրաժեշտ ե մեկ հեկտարի վրա ցանել 1,3—1,5 ցենտներ: Յերկրամասի կիսաշորային մասում,—Ստարոմինսկու, Կուչչևսկու, Բատայսկի, Ազովիու, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ, Նովչերկասկի, Մեչետինսկի, Դիգանտի, Բելովինսկի, Տագանրոդի, Մատվեև Կուրդանսկի, Շախտի, Սուլինի, Կամենսկի, Տարասովսկի, Միլլերովսկի, Լեռնո-Կալիտվենսկի ռայոններում, Թերեքի, Ստավրոպոլի ու Արմավիրի նախկին շրջանների հարավային, կիսաչորային ռայոններում—անհրաժեշտ ե ցանել մեկ հեկտարի վրա 1,1—1,2 ցենտներ: Չորային ռայոններում (Վեշենսկի, Վ. Դոնյան, Կաշարսկի, Մորոզովսկի, Կաստանտինովսկի և այլ) պետք ե ցանել մեկ հեկտարի վրա 1 ցենտն., մերջապես, ամենաչորային ռայոններում—մեկ հեկտարի վրա ընդամենը միայն 0,75 ցենտներ: Ծիլերը մրսելուց և արմատահանվելուց պահպանելու նպատակով, ցանքսի նորման զգալի չափով ավելացնում են և գրանով իսկապես նվազում ե ձմեռը ծիլերի փչացման վտանգը: Խտացրած ցանքսերը սովորաբար ավելի կայուն ու դիմացկուն են: Յեթե ձմեռը հաջողակ ե ան-

ցել, չափից դուրս խտացրած ցանքսերն անհրաժեշտ է նոսրացնել լավ տափանելու միջոցով:

Ցենե խտացած ցանքսերը թողնել առանց ցարանելու, նրանք ավելիշուտ կենթարկվեն յերաշտի և մանրիկ հատիկների վնասակար ազդեցության: Ցանքսն ուշանալու դեպքում անրհաժեշտ ե ավելացնել ցանելու նորման: Առ հարկավոր ե անել նրա համար, վոր ուշացած ցանքսի ծիլերը չեն տալիս այնպիսի ուժեղ ճյուղավորում, ինչպես վաղ ցանքսերը: Մերմերը հողի մեջ պիտի ընկնեն 3—5 սանտիմետր խորությամբ:

ՑԱՆՔՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գետք ե ի նկատի ունենալ, վոր 1931 թվականին աշխան ցանքսի նախապատրաստությունը և հենց ցանքսը պիտի կատարվի մոտավորապես նույն ժամանակի, յերբ պիտի տեղի ունենան մյուս կարևորագույն տնտեսա-քաղաքական կամպանիաները, ներքահավաքը, հացաբույսերի կալսը, բաղնանավոր կուլտուրաների բերքահավաքը, աշխանավարը, հացահատիկի կոնվեյերային սիստեմով հանձնումը կալսիչներից՝ մթերակայաններին ու ելեվատորներին,—այս ամենը ույժերի հսկայական լարվածություն կպահանջե սովորողներից ու կոլխոզներից: Այս բոլոր աշխատանքների հաջողակ կատարումը,—վորոնք հաճախ տեղի յեն ունենում միաժամանակ, —հնարավոր ե միայն այն դեպքում, յեթե իսկապես յուրաքանչյուր ձի, յուրաքանչյուր տրակտոր, կոլխոզնիկ, սովորողի յուրաքանչյուր բանվոր առաջուց նշանակված լինի վորոշ աշխատանքը:

համար: Քարշող ույժի ու աշխատող ձեռների դասավորման միայն վորոշակի ճշգրտությունը կապահովի բոլոր խնդիրների իրագործումը, այս թվում նաև աշխանացանի նախապատրաստության և նրա անցկացման պլանների կատարումը:

Ամեն մի կոլխոզում, հենց հացի բերքահավաքի մոմենտին, պետք ե պատրաստվի ցանքսային կամպանիայի անցկացման պլանը: Յուրաքանչյուր բրիգադ պետք ե ստանա պլան-նարյադ, վորտեղ վորոշված և լինում աշխատանքների ծավալը, նրանց անցկացման կարգն ու աշխատող ձեռների և քարշող ույժի դասավորությունը: Պլանում մի առանձին ճշտությամբ պիտի մասնանշվեն ցանքսի կարգը քաղհանակոր դաշտերում, վորտեղ անհրաժեշտ և հավաքել քաղհանագոր բույսերի ցողունները: Բրիգադայի ներսում կազմակերպվում են վարողների, տափանողների, ցանողների և այլն ողակներ, վորոնք իրենց աշխատանքի համար ստանում են տաքել-նարյադներ, վորտեղ գրվում ե աշխատանքի տեղը, հողի տարածությունը, աշխատանքների ժամկետերն ու մշակույթի նորմաները:

Բոլոր նախացանքսային և ցանքսային աշխատանքների հաջող կատարման կարեորագույն պայմանն է գործարքային սիստեմի նիշը կազմակերպումը: Յեզինչպես նաև մյուս աշխատանքների մեծ մասում, անհրաժեշտ ե կիրառել անհատական և մանր-խմբակային գործարքը: Պետք ե աշխատանքը կազմակերպել այնպես, վոր արտադրության յուրաքանչյուր մասնակցող ամեն մի որվա վերջում կարողանա հաշվել վոչ միայն այն, ինչ վոր արգած ե, այլ և գիտենա, թե

նրա կատարած աշխատանքի համար քանի՛ աշխատանքային որ են հաշվելու: Սակայն, միշտ ել նպատակութաժման մանր ողակները բաժանել այն հաշվով, վոր զեսզի ամեն մի տափան, ամեն մի գութան ու ցանիչ—աշխատեն բոլորովին: Բնքնուրույն Մի քանի դեպքերում այդպիսի բաժանումը կարող ե սատուիկ դժվարացնել աշխատանքի կազմակերպումն ու նրա կատարման ստուգումը: Այս պատճուռվագիր կարելի յել լայն կերպով գործադրել 2-3 քարշող ույժի վրա աշխատող մանր խմբակները: Ուժերի այսպիսի դասավորությունը վերացնում ե այն ձգձումները, վորոնք առաջանում են մեծ քանակությամբ ուժերով մի ակոսով վար անելիս: Դրա հետ մեկտեղ, պայմաններ են ստեղծվում այնպիսի խմբակներ կազմելու համար, վորոնք կարող են աշխատել ամերաշխ, առանց սահեկոսեների, առանց իրարանցման, հավասարվերով ամենալավ հարգածայնի հետ:

Հասկանալի յե, վոր սոցմրցությունն ու հարգածայնությունը պետք ե դառնան իսկական հիմք աշխատացան անցկացնելու այն ժամկետերում, վորոնք նախատեսնված են պլանում:

Պետք ե մրցեն բոլոր կոլխոզնիկները խմբակի ներսում, խմբակը խմբակի հետ, ըրեգաղը ըրեգաղի հետ և այլն:

Եյն կոլխոզներում, վորտեղ աշխատում են տրակտորները, անհրաժեշտ ե նախացանքսային աշխատանքն ու ցանքսը կազմակերպել գիշերը, ապահովելով տրակտորի աշխատանքը մինչև 21 ժամ վարովինչպես այդ հաջողեցրին լավագույն սովորողներն ու մեքենա - տրարակտորային կայաններն անցած գառ-

նանացանի կամպանիայում: Բայց, հաջողեցնելով տրակտորների լավագույն ոդտագործումը, անհրաժեշտ է մի առանձին ուշադրությամբ աշխատանքի պատրաստել կենդանի քարշող ույժը—ձիյերին ու յեզներին: Յերկրամասի կոլխոզներում 1931 թվականին նախացանքսային ու ցանքսային աշխատանքների հիմնական ծանրությունն ընկնում ե կենդանի քարշի—ձիու և յեզն վրա:

Այս պատճառով կոլխոզները բացառիկ ուշադրությամբ պիտի վերաբերվեն դեպի ձին ու յեզը:

Ձիյերն ու յեզները չպետք ե կորցնեն աշնանացանի աշխատանքներն արագությամբ և հաջողակ կատարելու ընդունակությունը, չնայելով հացի բերքահավաքման ու ուղափոխության մշտական աշխատանքին: Լավ ինամբը, հսկողությունն և ուժեղացրած կերը պետք ե ապահովեն ձիյերի ու յեզների բարձր վարակը: Պետք ե նկատել, վոր ձիյերն ու յեզներն ավելի շատ վախենում են կերի սակավությունից, անտնտեսավար խնամքից, անշնորհք քշելուց, —քան թե ախատանքից,

Ամեն մի կոլխոզնիկ շատ հիանալի դժուի այս բանը, ուստի և պետք ե նիշե, վոր կոլխոզում գլխավոր քարշող ույժն առայժմ ձին ու յեզն են, վարոնք պետք ե ովտեն ամենառաջադիր խնամքով և լավ կերակրվեն: Նկատելով ձիյերի չափից զուրս բայքայվածություն, ծեծի հետքեր, տանջում, բարբարոսական քշոց (եզա) առանցին կոլխոզնիկների կողմից, ամեն մի կոլխոզնիկ պետք ե անպայման միջամտե, պայքարե այդ յերեվույթների դեմ և աշխատի ստեղծել այնպիսի դրություն, վարպեսզի ձիյերն ու յեզները միշտ պատ-

րաստ լինեն կատարելու ամեն մի աշխատանք: Միայն կուշտ, առողջ էծկանով կարելի յե կատարել բոլոր ծրագրված աշխատանքներն և աշնանացանն ավարտել իր ժամանակին: Յեթե գարնանը կերի պաշկասությունը խանգարում եր ձիյերին ու յեզներին պահել ինչպես հարկավոր ե, ապա ամառը, յերբ բոլոր դաշտերը լիքն են կերով ու կանաչով—ձիյերի ու յեզների լղարությունը պետք ե համարվի մի անթույլաբելի անփութություն կոլխոզի վայշության, քրիգագիրի, ծիապահների ու յեզապահների, լուծ քշողների և վերջապես, բոլոր կոլխոզնիկների կողմից:

Պետք ե ասել, վոր կուլակության մնացորդները, ինչպես և յուրաքանչյուր կարևորագույն էսմպանիայում, պետք ե ամեն կերպ արգելակեն ցանքով հաջողությունը, ագիտացիա մղելով աշնանացանի դեմ, վերջինս կալսից և հացի տեղափոխությունից հետո կատարելու համար, մանր խմբակային գործարքային սիստեմի գեմ: Սակայն կոլխոզնիկների արդեն աճած կաղբերն իրենց համախմբվածությամբ, իրենց վճռականությամբ, սոցմբցության հիմանքներով պետք ե ջարդ ու փշուր անեն սոցշինարությունը խանգարելու կուլակային մնացորդների բոլոր փորձերը:

1931 թվականին աշնանացանը պիտի կատարվի սովորային ու կոլխոզային դաշտերում: Մնացած անհատականները, վորոնք բավականաչափ ժամանակ ունեն արտելային տնտեսության ոգուաները նորից ու նորից իրենց աշքերով տեսնելու համար, պետք ե աշնանացանին մտնեն կոլխոզները: Կոլխոզնիկները պետք ե այստեղ ոգնեն անհատականներին:

Աշնանացանի հաջողությունն ապահովելու համար, անհրաժեշտ է անպայման կիրառել բոլոր վորոշումները՝ բերքահավաքման ու նախացանքսային աշխատանքների ընթացքում հաշվառել կատարելու և աշխատանքային որերը ցուցակագրելու մասին։ Պետք է նաև անպայման կիրառել բոլոր վորոշումները յեկամտների թե մթերային և թե դրամական մասերը բաշխելու մասին։ Յուրաքանչյուր կոլխոզնիկ այսոր պիտի գիտենա, թե յերեկ վորեա՞ն աշխատանքային որ ե վատակել։

Յուրաքանչյուր կոլխոզնիկ հենց սկզբից ոլիսի գիտենա, վոր միայն նրա գործադրած աշխատանքի հանակույրյունն յեվ այդ նույն աշխատանքի վորակն են վարում նրա մթերային ու դրամական յեկամուտը։

Մթերքներով ու փողով ավանմներ տան ևս պիտի կազմակերպի ամեն մի կոլխոզնիկի կողմից առաջարկությունների կատարման հաշվառքով, նույնած կոլխոզնիկի աշխատանքի քանակին ու վորակին։ Այս դեպքում յուրաքանչյուր կոլխոզնիկ պիտի ձգտե շատ դարձ անել և լավ անել։ Միայն այս դեպքում ամեն մի կոլխոզնիկ պիտի հավասարվի կոլխոզի տեմենալավ հարվածայիններին։

Ցանքսի վորակի համար մղվելիք պայքարը կարենուագույն ինդիր է։

Կատարելով աշնանացան հացարույսերի ցանքի պլանները, յուրաքանչյուր կոլխոզնիկ պետք է զիտենա, վոր աշխատանքի վորակը վճառկան նշանակություն ունի բերքի համար։ Յեվ հենց դրա համար և, վոր պետք ե հաշվի առնել աշխատանքի վոչ միայն

քանակը, այլ և վորակը Յուրաքանչյուր ցանքած հողամաս կոլխոզի վարչության կողմից պիտի ընդունվի գյուղատնտեսի, բրիգադիրի և կոլխոզնիկների ներկայացուցիչների մամնակցությամբ։

Հողի չվարված տեղերը (օրքես), կը կնացանը (օծեավ), — այսինքն չափից ավելի սերմ ցանելը, սերմացուն ինչպես պետք ե հողում չթաղելը (բաւառ) — այս ամենը պետք ե նշվի ամեն մի հողամասում։ Կոլխոզներն առանձնապես վճռականորեն պիտի պայքարեն ցանքսի ուշացման դեմ։ Այս պատճառով այնպիսի աշխատանքներն, ինչպիսին են քաղհանակոր կուլտուրաների բերքահավաքն ու ցողունների հավաքումը, պետք ե կատարվեն ամենակարճ ժամանակամիջոցում։

Յուրաքանչյուր գեպքում անհրաժեշտ է, բրիգադի բոլոր անդամների ժողովում, գտնել աշխատանքի վատ վորակի մեղավորներին։

Նույնպես ժողովներում պետք է վորոշել, թե ինչքանո՞վ պիտի պակասեցվեն աշխատանքները վատ կատարողների աշխատանքային որերը։ Լավագույն կոլխոզնիկներին, վորոնք իրենց ուշագրությամբ, բարեխիղճ աշխատանքով ապահովել են իր ժամանակին ցանքսն ու աշխատանքի բարձր վորակը, անհրաժեշտ է տալ պրեմիաներ, բացի նրանց վաստակած աշխատանքային որերից։ Այս պրեմիաները կոլխոզնիկների մեջ պիտի ստեղծեն նույնպիսի վերաբերմունք դեպի կոլխոզային դաշտերն, ինչպես գեպի «իրենց դաշտերը»։ Ով կոլխոզի համար շատ յեվ լավ է աշխատում, նա պետք է շատ ստանա կոլխոզից։ Այսպիսով կոտեղծվի իսկապես տնտեսավարական վերա-

բերմունք դեպի կոլխոզային բերքը։ Այս միևնույնը կծառայի վորպես միջոց՝ թամբաների, կորզիչների, ուրիշի աշխատանքով իրենց փորբեառացնել սիրողների գեմ պայքարելու համար։

Յեկամտ. բաժանման մեջ հավասարեցում մտցնելու ամեն տեսակ փորձերը պետք ե գնահատվեն վորպես դասակարգային թշնամու—կուլակի ուղղակի պայքար ընդդեմ կոլխոզների ամրապնդման, ընդդեմ կոլխոզային բներքի և կոլխոզնիկների յեկամտի։ Յուրաքանչյուր կոլխոզնիկի համար պարզ ե, վոր այժմ հավասարեցման կողմնակիցներ կլինեն վոչ թե նրանք, ով մտածում ե աշխատանքային դիսցիպլինա ստեղծելու, կոլխոզային բարձր բերքի, աշխատանքները ժամանակին կատարելու, լավագույն հարփածայինին հավասարվելու մասին, այլ կոլխոզնիկների այն հետամնաց խավերը, վորոնք իրենց անդիտակցության շնորհիվ քարշ են գալիս կուլակի յետևից, վորը գիտե, թե հավասարեցումը լավագույն միջոցն ե կոլխոզի քայլայիման, հավասարեցումը—պատճառ ե թամբաներին ու թափթփածներին հավասարվելու, հավասարեցումը—պատճառ ե կորստների, ցածր բերքի և ցածր յեկամուտների։

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր աշնանացանի ժամանակ դաշտային բրիգադներում պետք ե կազմակերպովի որինակելի հասարակական մնունդ լուվ «հասարակական կաթսայով»։ Այդ ժամանակ դաշտից, բանջարանոցից, պարտեզից ու այգուց բերք ե հավաքվում։ Աշնանը հասարակական վատ մնունդը ցույց կտա, վոր կոլխոզի վարչությունն ու բրիգադիրը

չեն կարող ճիշտ կազմակերպել անտեսությունն և ի վիճակի չեն ճիշտ վճռել կոլխոզային տնտեսության ամբապնդման խնդիրը։

ՄԻԶՈՑՆԵՐ ԲՈՒՑՍԵՐԻ ՄՐՍԵԼՈՒ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Աշնանացան հացարույսերի ծիլերի մրսելու և արմատահանվելու գեմ պայքարի լավագույն միջոցները հանդիսանում ե այն ամենը, ինչ վոր ապահովում ե ձյան յերկար մնան աշնանացան դաշտերում, իր ժամանակին կատարված ցանքը, ցանքի նորմաների կատարումը։

Շարքային ցելերը, ցողունների մի մասը քաղանացվոր դաշտերում թողնելը ամենից լավ են պահում ձյունն աշնանացանի դաշտերում։ Այս միջոցներն ել պետք ե լայն չափով գործադրվեն յերկրամասի սովորովներում ու կոլխոզներում։

Ամերիկայում, սակավածյուն ձմեռները, մեծ չափով կիրառվում ե ծղնութ թափելն աշնանացանի դաշտերում։ Այնտեղ նույնպես գործադրվում ե աշնանացան հացարույսերի ցանքն ակոսների մեջ։ Հեռց սառնամանիքներից առաջ ակոսների հողակույտերը հարթվում են գերանի հարթիչներով, տափաններով և դրանով մասամբ ապահովվում են աշնանացանի ծիլերը։

Նկատված ե, վոր խտացրած ցանքերն ավելի դիմաց կուն են լինում ձմեռը։ Բայց ե այսպես, առայժմ մրսելու գեմ լավագույն միջոցը պետք ե համարել շարքային ցելերը, քաղանացավորների ցողունները թողնելը և աշնանացանի ժամանակին կատարումը։

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սոցիալիստական տնտեսությունները — սովորողներն ու կոլխոզները — սոցիալիստական դաշտերի տերերն — այս տարի բավականաչափ զինված են տեխնիկայով, փորձով, բավականաչափ կազմակերպված են նրա համար, վորպեսզի աշնանացանի ցանքերը կատարեն ավելի լավ, քան այդ արել են կոլխոզներն անցյալ տարի:

Յանել ժամանակին, ցանել պատրաստած հողի վրա, ցանել տեսակավոր, զտված, ախտահանված սերմացու, ցանել շարքային ցելերում, թռղնել քաղհանափոր բույսերի ցողունների շարքերն — այս նշանակում ե համարյա ամեն ինչ ապահովել նրա համար, վորպեսզի կրկնապատկել աշնանացանի բերքը:

Այս բոլոր միջոցները կիրառելու համար հարկավոր ե նախացանքային աշխատանքների ճշգրիտ պլան, հարկավոր և կենդանի բարեող ուժի ուժնակելի վիճակ, հարկավոր ե, վոր կոլխոզնիկը պարզ պատկերացում ունենա գործարքային սիստեմի մասին, ճիշտ կազմակերպվի սոցմլցությունը, հարկավոր ե աշխատանքների կազմակերպում, վորով ապահովում ե բոլոր կոլխոզնիկների հավասարվելը լավագույն հարվածայիններին, հարկավոր ե անինա պայքար մղել կուլտակության մնացորդների դեմ:

Այս ամենը գտնվում ե կոլխոզների և կոլխոզնիկների ձեռքում:

Հառաջ, գեպի աշնանացանի բերքի կրկնապատկումը:

Ժամանակին կատարվելիք ու լավագույն վորակի ցանքսով ապահովենք աշնանացանի բերքը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Աշնանացան հացի նշանակությունը Հյուսիսային կովկասի համար 1
- Աշնանացան կուլտուրաների առավելությունը գարշանացանի հանդեպ 5
- Աշնանացան հացարույսերի բերքատվությունը 8
- Վորտեղ ցանել աշնանացան հացարույսերը 11
- Ինչպես պատրաստել հողն աշնանացանի համար 17
- Խովենտարի պատրաստությունը 20
- Աշնանացան հացարույսերի տեսակները 20
- Աերմացույի պատրաստումը ցանքսի համար 25
- Աշնանացանի ժամկետերը 27
- Ցանքսի նորմաները 32
- Ցանքսի աշխատանքների կազմակեպումը 33
- Միջոցներ բույսերի մրսելու դեմ պայքարելու համար 41
- Ցեղակացություն 42





ՀՀ Ազգային գրադարան



NL0286170

СКРАЙНАЦИЗДАТ

631.5
L-24

12508

16808

ԳԻՒՆ Ե 8 ԿՈՊ.

Цена 8 коп.
с. х. 4. 0

1
2



НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

А. И. Лавлинсков

Правильный и своевременный посев гарантирует урожай

Сев.-Кав. кр- отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов ССР.
«КРАЙНАЦИЗДАТ»

631.5
L-24